ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 17 մայիսի 2019թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Նաիրա Հարությունյան
Անդամներ	Միշա Երանոսյան
	Հենրիկ Պողոսյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գազաբալոնային սարքավորման տեղադրման աշխատանքների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 320 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Ա/Ձ Արթուր Սաֆարյանը (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի փող., 54գ շենք, բն. 93, էլ. փոստ՝ ssartss@list.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը, որը կազմում էր 290 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Արթուր Սաֆարյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Ա/Ձ Արթուր Սաֆարյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ա/Ձ Արթուր Սաֆարյանի հետ կնքել գազաբալոնային սարքավորման տեղադրման աշխատանքների կատարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՇՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Նաիրա Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ _____ Միշա Երանոսյան

_____ Հենրիկ Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան